

«Ինչպե՞ս օգնեցին Ձմեռ Պապիկին» . Քեյթ Վիլ

Նոր Տարուն մնացել էր ընդամենը մեկ օր: Ամենուր գեղեցիկ գույնզգույն լույսեր էին վառվում, իսկ պատուհաններից երևում էին զարդարված տոնածառերը: Իսկ եթե ուշադիր լինենք, ապա մարդկանց մեծ բազմության մեջ կարելի է տեսնել չորս ընկեր-գազաններին: Դրանք արջուկ Օտտո Վիդրան ու նրա ընկերներ սկյուռ Վիլլին, խլուրդ Դիդոն ու մկնիկ Պիպին էին:



Նրանք ևս գնում էին քաղաքի ամենամեծ տոնածառը տեսնելու և մյուսների հետ ուրախանալու:

Քանի դեռ ընկերները տոնական երգեր էին լսում, Պիպին մոտակա տներից մեկի կտուրին նկատեց եղջերուի արձան: Այն այնքան նրան դուր եկավ, որ նա ուշադիր սկսեց հետևել նրան ու հանկարծ նկատեց, որ եղջերուի ականջներից մեկը շարժվեց և նրա վրա նստած ձյունը թափվեց:

-Այն եղջերուն շարժվում է,- բացականչեց նա:

Նրա ընկերները, այնքան էլ չհավատալով նրան, ևս սկսեցին հետևել եղջերուին: Բայց ոչինչ տեղի չէր ունենում: Եղջերուի արձանն անշարժ էր: Վերջապես նրանք հոգնեցին ու որոշեցին տուն վերադառնալ:

-Բայց ես վստահ եմ, որ եղջերուն շարժվեց,- չէր հանդարտվում Պիպին, քանի դեռ նրա ընկերները քայլում էին դեպի տուն:

Իսկ այդ ընթացքում եղջերուի արձանը, համոզվելով, որ չորս ընկերները կորան տեսադաշտից, զգուշորեն բարձրացավ նախ հետևի ոտքերի վրա, ապա ուղղեց առջևիները և ամբողջ հասակով կանգնելով կտուրի վրա, սկսեց զգուշորեն իջնել այնտեղից, չէ՞ որ նա դեռ լիքը անելիք ուներ:

Ամանորի լույսերը պայծառ լուսավորում էին փողոցները, իսկ խանութների ցուցափեղկերը գեղեցիկ զարդարված էին: Մարդիկ, պինդ-պինդ փաթաթված մուշտակների մեջ, նոր տարվա տոնի վերջին գնումներն էին կատարում և շտապում դեպի տուն: Եվ ոչ ոք չէր նկատում, թե

ինչպես իրենց գլխի վրայով ինչ-որ ստվեր է սահում:

Ահա մեր չորս ընկերները հասան Օտտոյի տուն, թափ տվեցին ձյունը կոշիկների վրայից և շտապեցին ներս մտնել՝ դեպի տաք տուն: Իրենց համար պատրաստեցին տաք շոկոլադ և համերաշխ նստեցին բուխարու շուրջը, թաթիկներն ու մռուկները դեմ տալով ջորմուկթյանը: Բոլորն ուրախ էին ու անհոգ, միայն Պիպին էր լուրջ ու մտախոհ հետևում խարույկի կայծերին: Նա չէր կարողանում մոռանալ այն եղջերուին:

-Որոշված է, ես հետ եմ վերադառնում, - հանկարծ հայտարարեց նա ու տեղից վեր թռավ: - Գալի՞ս եք ինձ հետ:

Եվ ահա, ավելի տաք հագնվելով, ընկերները վերադարձան քաղաքային հրապարակ: Եվ ի՞նչ հայտնաբերեցին. այն կտուրը, որի վրա կանգնած էր եղջերուն, դատարկ էր:

-Նա հեռացել է, - տխուր բացականչեց Պիպին:

-Եկեք խողովակի օգնությամբ բարձրանանք կտուր և ստուգենք, - առաջարկեց Վիլլին:

Օտտոն ու Պիպին առաջինը բարձրացան

խողովակի միջով և Վիլլիի համար ճոպան ցած նետեցին: Իսկ Դիդո խլուրդը որոշեց խողովակի միջով բարձրանալ, չնայած, որ նրան խողովակի բարձրությունը դուր չէր գալիս: Բայց չէ՞ որ խլուրդների համար ոչ մի թունել սարսափելի չէ:

Վերջապես նրանք հասան կտուր:

-Պետք է եղջերուի հետքերով գնալ, - առաջարկեց Պիպին:

Եվ ընկերները սկսեցին հետևել ձյան վրայի հետքերին, մեկ բարձրանալով դեպի վեր, մեկ իջնելով ներքև: Վերջապես, ծինելույզի հետևից նայելով, նրանք տեսան եղջերուին: Նա կանգնել էր դիմացի պատուհանի մոտ և կամաց թակում էր ապակին: Հետո ընկերները տեսան, թե ինչպես պատուհանը բացեց և նրա միջից երևաց կիսաքուն մի փոքրիկ: Նա եղջերուի վզին կախված պայուսակի մեջ ինչ-որ թղթի կտոր դրեց: Հետո փոքրիկը շոյեց եղջերուի թաց քիթը ու, մաղթելով նրան բարի գիշեր, փակեց պատուհանը:





Հիասքանչ մի թռիչքով եղջերուն թռավ դեպի մյուս կտուրը ու թակեց հաջորդ պատուհանը: Եվ նորից ամեն ինչ կրկնվեց ինչպես նախորդ պատուհանի դեպքում:

-Ես ձեզ ի՞նչ էի ասում,- շշնջաց Պիպին գարմանքից լայն բացած աչքերով ընկերներին: - Այս եղջերուն արձան չէ: Երբ եղջերուն թռավ նրանց գլխի վրայով, չորս ընկերներով պինդ սեղմվեցին ծխնելույզի խողովակին: Հանկարծ ինչ-որ թղթի կտոր, օդում պարելով, իջավ նրանց ոտքերի մոտ: Օտտոն վերցրեց այն ու լապտերիկով լուսավորեց, որպեսզի

կարողանա կարդալ նրա մեջ գրվածը:

-Դե, ի՞նչ է այնտեղ գրված,- խմբով հարցրեցին ընկերները:

-Օ՛, ոչ,- բացականչեց Օտտոն: - Սա նամակ է Ձմեռ Պապիկին: Երևի եղջերուն պատահաբար այն գցեց ու հիմա այն փոքրիկը նվեր չի ստանա: Նա Ձմեռ Պապիկի նամակը դրեց իր գրպանը: Կենդանիներն իջան տանիքից ու քայլեցին դեպի տուն:

Հաջորդ օրը Նոր Տարի էր: Հենց ժամացույցն ազդարարեց ժամը տասնմեկը, ընկերները քայլեցին դեպի քաղաքային հրապարակ: Շնչակտուր հասնելով տեղ, նրանք առաջին հերթին նայեցին տանիքին: Եղջերուն իր տեղում էր:

-Դեռ ուշ չէ: Շտապենք,- բացականչեց Պիպին ու սկսեց բարձրանալ տանիք:

Եվ ահա չորս ընկերները կրկին տանիքի վրա էին: Այս անգամ նրանք նստեցին եղջերուի մեջքին ու սկսեցին սպասել:

-Դուք իսկապե՞ս կարծում եք, որ սա Ձմեռ պապիկի եղջերուներից մեկն է,- հարցրեց Դիդոն, որն արդեն հոգնել էր եղջերուի մեջքին նստած սպասելուց:

Բայց նրան ոչ ոք չպատասխանեց: Ցուրտ էր ու կենդանիները նստած էին արձան-եղջերուի սառը մեջքին: Ժամացույցը ազդարարեց տասնմեկն անց կես: Նոր տարվան մնացել էր ընդամենը կես ժամ:

-Ձմեռ Պապիկը երևի չի գա,- ծանր հառաչեց Դիդոն:

Եվ հանկարծ նրանց ականջին հասավ զանգակների հեռու կարկաչը, և եղջերուն, որի վրա նստած էին ընկերները, սկսեց շարժվել: Չէին հասցրել նրանք հասկանալ, թե զանգերի ձայնը որտեղի՞ց է գալիս, երբ

հանկարծ նրանց առջև հայտնվեց Ձմեռ Պապիկի հսկա սահնակը: Ձմեռ Պապիկը կանգնեցրեց եղջերուներին: Եղջերուները կանգնեցին, բայց անհամբեր ոտքերն էին թափահարում:

-Ողջու՛յն, սիրելիներս,- ժպտաց Ձմեռ Պապը:- Ի՞նչ եք անում այստեղ:

-Մենք եկել ենք քեզ օգնելու,- պատասխանեց Պիպին:

-Օգնե՞լ, շատ լավ է,- ասեց Ձմեռ Պապը՝ միաժամանակ տանիքի եղջերուին կապելով մյուս եղջերուներին:- Ես միշտ ուրախ եմ օգնութ՞յուն ստանալ, մանավանդ ինձ համար շատ երկար տևող այս տոնական գիշերը:

Ընկերներն արագ բարձրացան Ձմեռ Պապիկի սահնակի վրա և այն անմիջապես երկինք բարձրացավ:

-Արագ-արագ, – շտապեցեց եղջերուներին Ձմեռ Պապը ու հետո սկսեց ընկերներին բացատրել.- Այս գիշեր մենք պետք է պտույտ կատարենք ողջ երկրագնդի շուրջը, որովհետև Նոր Տարվա գիշերը մեզ համար ժամանակը կանգ է առնում:

Եվ իսկապես, նրանք պտույտ գործեցին երկրագնդի շուրջը՝ նվերներ բաժանելով


բոլոր այն երեխաներին, ովքեր նամակ էին գրել Ձմեռ Պապիկին: Նրանք նույնիսկ ժամանակից շուտ կարողացան ավարտել իրենց գործը, քանի որ Պիպին այնքան հաստիկ չէր, ինչպես Ձմեռ Պապը ու հեշտութ՞յամբ կարողանում էր մտնել ցանկացած ծխնելույձ ու նվերը հասցնել երեխաներին:

Վերջապես նվերներ բաժանելու դժվար գործը ավարտեցին: Ու հանկարծ Պիպին հիշեց այն թղթի կտորի մասին, որ եղջերուն պատահաբար կորցրել էր...

«Մի կարմիր ֆերրարի ավտոմեքենա և մի գեղեցիկ արքայազն իր ամրոցով», - գրված էր նամակում:

-Բայց դա հնարավոր չէ: Ի՞նչ պետք է անենք:

-Ահա թե ինչ,- պատասխանեց Ձմեռ Պապիկը:- Մտածում եմ, որ միջին չափսի կախարդական զարդատուփը լիովին բավական է, որպեսզի նրանք նայեն դրա ներսը և տեսնեն այն ամենը, ինչ ցանկացել են:





Ու Պիպին վերջին նվերը հասցրեց տիրոջը:
Այն տեղավորեց մանկական մահճակալի վրա
ու շտապ հեռացավ:

Բացվեց նոր տարվա առաջին առավոտը: Ձմեռ
Պապիկի աշխատանքն ավարտվեց և այժմ մի
ամբողջ տարի նա կարող էր հանգստանալ:
Ձմեռ Պապը իր նոր ընկերներին հասցրեց
տուն և հրաժեշտ տվեց:

-Մինչ նոր հանդիպում, Ձմեռ Պապիկ:
Ցտեսուժյուն, եղջերու: Մինչ եկող
տարի:- Բացականչում էին ընկերները,
քանի դեռ Ձմեռ Պապիկի սահնակը երևում
էր երկնքում:

Տանը չորս ընկերները միանգամից քնեցին խորը քնով, իսկ երբ
արթնացան, արդեն նոր տարի էր:

-Կարծում եք, այս ամենը երա՞զ էր,- հարցրեց Օտտոն, լուսամուտից
դուրս նայելով:

Բայց նա հաստատ տեսնում էր Ձմեռ Պապիկի սահնակի ու եղջերուների
հետքերը երկնքում:

Ռուսերենից թարգմանեց Վ. Բուռնուլչյանը